

նել անոնց անդաստանօրհնէքի արդիւնաւորութիւնը: Քրիստոնեաները դրան առջև համբերութեամբ շարունակեցին ազօթել: Երկու ժամ վերջ, սաստիկ հոյվ (notos) մը ելաւ, ինչ որ մենք կը կոչենք անձրեւի հոյվ, որ յառաջ բերաւ ելեկտրականութեամբ լեցուն ամպեր: Փոթորիկը պայթեցաւ և վերածուեցաւ այնպիսի բուռն և սաստիկ տեղատարափի մը՝ որ հաստահիմն տուներն (*) իսկ չը դիմացան անոր սաստկութեան: Ի տես այս հրաշքներուն՝ հեթանոսներէն շատեր քրիստոնէութիւնը ընդունեցին: Տեղատարափին տակ հրճուազին ազօթող քրիստոնեաներու առջեւ դուռը բացուեցաւ, և անոնք հեթանոսներէ հաւատացողներու հետ մտան Իրենեայ եկեղեցին՝ գոչելով. «Քրիստոս է միայն Աստուած, ինքն է միայն յաղթական» (C. S. E. 1910, էջ 253-255):

1432 ին Bertrandon de la Brocquièreի ցոյց տրուած է լեռ մը Գաղայի եւ Քեբրոնի միջև, և կոչուած է «Ս. Յովհաննու Մկրտչի ապաշխարութեան լեռ»: «Ահ-

(*) «Քրիստոնեայ Պաղեսիսի մէջ մէկէ աւելի օրինակներ կը գտնուին անձրեւի արակարգ ընդունելութեան մասին: 476 էն Բիչ յեսոյ, Պեսրու վրացի Մասապայի մէջ ընդունուեցաւ իբրեւ նոր Մովսէս մը եւ երկրորդ Եղիա մը, վասնզի տեղւոյն ժողովուրդը կը հաւատար թէ անոր ազօթներուն եւ առաքինութեանց համար արժանացած էր այն առասպալի տեղատարափին որ լեցուց աւազաններն ու ջրամբարները եւ վերջ տուաւ երաւոնութեան մը որ կ'աւերէր գաւառը» (Raabe, Petrus der Iberen, էջ 87, 90):

Մասապայի Ս. Եղիա եկեղեցիին մէջ (596-608) Թեաբացւոյն ուղղուած ազօթ մը կը կարգացուի, շատ անգամ ուղղուած երաւոնութեան համար այն գաւառներուն՝ որոնց բոլոր հարսութիւնը անձրեւէն կախում ունի. «Ո՛վ մարգարէ, բու ազօթովդ արդիւնաւորապէս շարժեցիր անձրեւաբեր ամպերը» (R. Bl. 1897, էջ 654, 1900, էջ 471):